




Ցարիկան գինն է . . . 140 դր2
Պեղանեայ " . . . 75 "
Երանեայ " . . . 40 "
Մեկ ծանուցումը տողին 3 դուռուշ է :
Ստորագրութիւնները կանխիկ են :
Ստորագրութիւնները ամեն ամսոյն 1 ին.
եւ 16 ին կը սկսին :

Դուք երթալիք լրագրներուն ճամբու.
ճախը առնողին վրայ է :
Լրագրոյս վերաբերեալ նամակ կամ որ
եւ իցէ գրութիւն, խմբագրին պիտի
ուղղուի . եւ ասոնց ճամբուն ճախ
ըն խրկողին վրայ է :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 16 ՅՈՒՆԻՍ

Նաբոլէոն կայսեր եւ Բրուսիոյ խը-
նամակալ իշխանին ու Գերմանիոյ թա-
գաւորաց եւ իշխաններուն Պատէն-Պա-
տէնի մէջ ըրած տեսակցութիւնը՝ Նա-
բոլէոնի խաղաղութեան հաստատ մնա-
լուն նպատակով բարեգուշակ դէպք մը կը
համարվի ընդհանրապէս :

Այս տեսակցութիւնը նախ Նաբոլէոն
կայսեր առաջարկեց Բրուսիոյ ինամակալ
իշխանին՝ իբրեւ լաւագոյն միջոց մը Գեր-
մանական տէրութեանց Գաղղիոյ վրայ
ունեցած կասկածը փարատելու :

Ինամակալ իշխանն ընդունեց այս
առաջարկութիւնը, բայց միանգամայն
գիտողութիւնը ուր Գերմանիայի մէկ
մեծ ժողով Բրուսիոյ վրայ ալ թէ եւ յա-
նրաւի՝ կասկած ունենալով, կրնայ ը-
լալ որ կայսեր փափաքած նպատակը ձեռք
չընել : Գաղղիոյ կառավարութիւնն ալ
պատասխան տուաւ թէ կայսրը բարե-
բաղդ կը համարի զինքը թէ որ Գեր-
մանիայի ուրիշ թագաւորներ ու իշխան-
ներ ալ ներկայ գտնուին առաջարկեալ

տեսակցութեան : Այս պատասխանը Բ-
րուսիոյ կառավարութիւնը Գերմանիա-
յի արքունեաց հաղորդելով՝ անոնք ալ
սիրով յանձն առին Պատ երթալ ու
Նաբոլէոն կայսեր հետ տեսնուիլ :

Ահաւասիկ այս տեսակցութեան վը-
րայ առայժմ եկած լուրերը :

Պատի գլխավոր տեսակցութեան Պատէն-Պա-
տէնի մայրաքաղաքէն հետեւեալ լուրերը կը
գրին եւրոպական լրագրներուն :

«Նաբոլէոն կայսրը յունիս 4/16 ին
Պատէն-Պատէն հասնելով՝ նոյն օրը
տեսութեան դնաց Բրուսիոյ ինամա-
կալ իշխանուհիին՝ Սաքսոնիայի, Պալէ-
րայի, Հաննովերի եւ Սիլեզիայի
թագաւորները, Սիլեզիայի մեծ դուքսն եւ
Քոպուրկի դուքսն ալ նոյն օրը տե-
սութեան դային Նաբոլէոն կայսեր : Ի-
րիկուան դէմ ալ կայսրն անոնց ամեն
մէկուն զատ զատ այցելութեան դնաց,
բայց Հաննովերի թագաւորը տունը չը-
գտաւ :

«Այս տեսակցութիւններուն ժամա-
նակը բոլոր թագաւորները քաղաքական
զեկտ հագած էին՝ հասկընդենլու համար
որ այս տեսակցութիւնին պարզապէս անձ-
նական է : Իրիկունը մեծ ծառ մը եղաւ Պա-
տէնի մէջ :

տի մեծ դուքսին պալատին մէջ, եւ վեց
թագաւորներն հոն ներկայ էին :

«Հետեւեալ առտուն Սաքսոնիայի ու
Պալէրայի թագաւորներն ու Նաբոլէ-
ոն կայսրը եկեղեցի գացին :

«Նոյն միջոցին Հիւսի մեծ դուքսն ալ
Պատէն-Պատէն հասաւ եւ նախաճաշին
ներկայ գտնուիցաւ : Այս օրէն երեք ժամ
ետը Պալէրայի թագաւորին օթեաւ
նը ժողով մը եղաւ որ մէկ ժամ տեւեց,
եւ որուն ներկայ էին չորս թագաւոր
եւ Հիւսի ու Նաբոլէոն մեծ դուքսերը :

Ինտրայէն յունիս 6/18 թուով
Պալէրայի Պորսան եկած հեռագրա-
կան լուր մը կը ծանուցանէ, թէ Նա-
բոլէոն կայսեր Գերմանիոյ թագաւորաց
հետ ըրած տեսութիւնը բարիարգիւնը-
ներ պիտի ունենայ խաղաղութեան հա-
մար :

— 0 —

Նախընթաց թուով ծանուցինք թէ
անգղիացի Սիկիլիայի Բալէրմօ քաղա-
քին կիցը եղած Քասթէլամարի բերդը
գրաւեր են :

Այս գրաւումն առջեւ բերանը դէշ
անգղիացիներն մը ըրաւ Գաղղիոյ մէջ
եւ լրագրներն սկսան աղաղակել թէ

Անգղիոյ տէրութիւնը Սիկիլիա կղզին
յափշտակելու կամ իր ձեռքն անցունե-
լու միտք ունի : Բայց ետքը զործին պատ-
ճառն ու պարագաները իմացվելով՝ սկի-
տերն հանդարտեցան :

Պարիսպալի զօրապետը Բալէրմօի
տիրելէն ետեւ, Նաբոլէոնի զօրքերը
Քասթէլամարի բերդը քաշվեր էին ու
հոնկէց կը պատերազմէին Պարիսպալի
հետ : Բայց ետքը նեղն ինչպիսի՝ երբոր
տեսութեան ժամը գտնուի, Պարիսպալի անձնա-
տուր ըլլան, Սիկիլիայի առջեւ սպասող
Անգղիական նաւախուռին հրամանա-
տար Մընտի ծովապետին միջնորդութիւ-
նը խնդրեցին : Անալ իւր նաւը հրա-
ւեց Պարիսպալի զօրապետը եւ Նաբո-
լէոնի զօրաց հրամանատարին պատգա-
մաւոր Լէթիմա զօրապետը, եւ հոն ու-
րոշում եղաւ Քասթէլամարի բերդը
պարսկելու եւ Պարիսպալի զօրապետին
յանձնելու : Այս որոշման վրայ՝ Նա-
բոլէոնները բերդէն մեկնել սկսան նա-
ւերով : Բայց փոխանակ ուղղակի ապրա-
տամբներուն յանձնելու՝ անգղիացեաց
յանձնեցին, անոնք ալ Նաբոլէոնները
բոլորովն քաշվել երթալէն ետեւ՝ բեր-

ՏՐԵՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՐԵՆԵԱՍԻՐԻ

Բ.

Մեծնաւ եւ Հայ օրագրները :

(Երբեք յօդուած) :

Բ. Մեծնաւայի զրջն վերադառնա-
լէն նախընթաց յօդուածով նշանակա-
ծին, իր բարոյական մարդուն արատ մըն-
էր ըստ մեր կարծեաց. այժմեան զրկե-
նիս ալ իր իմաստասիրական էին կը հա-
կառակի : Առաջին իրեն դայթաղու-
թիւն մընէր, որուն ինք անփոյթ ըլլաւ
նէ, այլք, մեզմէ զատ, իրմէ առաջ եւ
իրմէ աւել անփոյթ կընային ըլլալ : Իսկ
երկրորդը այլոց գայթաղութիւն ըլլա-
լով, ինք անփոյթ ըլլայ ալ նէ, այլք չեն
կընար անգոյ մնալ, վասն զի, մարա-
կն իրենց անձին, իրենց խղճին, իրենց
հաւատարմութեանն, ու վերջապէս ի-
րենց բարոյականին կը դաշն, եւ կը պար-
տաւորին կամայ ակամայ ամբաստանու-
թիւնը հերքել :

Այս անհաճոյ բայց եւ միանգամայն
ստիպական հարկին տակը կը դրանուի
հիմայ մէնք եւ այն օրագրները, որ մը-
շական վիճին մէջ աւելի կամ նուազ
խառութեամբ փաստ, պատճառ եւ ա-
պացոյց միայն դնելով, աւելի կամ նը-

ւաղ կորովով եւ տրամաբանութեամբ
Մեծնաւայի դէմ պաշտպանեցին ազգա-
յին դատը : Չենք ուրանար, որ այս վե-
ճին մէջ Մեծնաւայի զրջն դէմ բան
մը ըսած ըլլալու համար միայն բան խօ-
տըներ ալ եղան : Էնք ուրանար դարձ-
եալ, որ իրեն դէմ ծանր եւ նախատա-
կան խօսքեր ընտրեն ալ եղան : Բայց
տիրութեամբ կը տեսանք, որ Մեծ-
նաւայի զգաւտ զրջն անոնց մէկուն ալ
տակը չմնային զատ, հասարակաբար ինք
զրկուց զրիչները : Ուստի մենք այս ան-
գիտութիւնները անառակ եղաւոյ ժա-
մանակեայ մոլորութիւն համարելով, զեղ-
ջն ու ասորաւան իրենց խղճին կը ձգենք,
եւ վիճին վրայցօր քրտի մօտք եւ լըծարար
գրողներուն համար կը խօսինք :

Երբ, Մեծնաւայի զրիչն իր բարձ-
րութենէն մեր նուաստութեանը զեղա-
նելու խոնարհութեանն անգոյ գտնը-
ւելին նշանակելէն ետեւ, ըսած է որ,
«Այս շնորհը չեմանչապէս զատ, վիճա-
րանութեան սահմանէն ալ ելլալով,
«կոյր եւ ցած հակառակաբերութեան
«մը սահմանը հասան» : . . . Սոյր եւ
ցած հակառակաբերութիւն, եւ վիճէն ալ
զարտուելութիւն : . . . Թէ որ այս ամ-
բաստանութիւնն իրաւ էնէ, Տարական
ժայռերէն վար նետուելով կընանք ա-
մօթնիս պարտելի : Բայց Տարական

1 Մեծն. 345,

ժայռերն ի վեր՝ զիմենուս առաջ, զըր-
ւածները քննենք նախ, որ պարտապան
գտնուինքնէ խոստովանինք, եւ թողու-
թիւն փնտրենք :

Հապարակագիր մը իր բռնած աղա-
յին դատը պաշտպանելու պարտաւոր է,
մինչեւ ուր որ արդարութիւնն ու իրա-
ւունքն իրեն հովանի եւ զօրավիշ են :
Բայց երբ արդարութիւնն ու իրաւուն-
քը մեղ կը լքանեն, ըսել կուզիմ թէ,
երբ բռնած դատերնիս անիրաւ եւ ա-
նօրէն է, կը պարտաւորինք, թէ որ ին-
քստեալ մարդու պարտին ու արժանի-
քը կը ծանցանքնէ, ձեռնթափ ըլլալ ա-
նօրէնութեան սատարութիւնէ : Ասիկայ
ինչպէս որ կը խոստովանինքնէ անսնկալ
հաւատալով, յանուն արդարութեան եւ
պարզութեան մը քննենք խնդիրը :

Մուշէ մէջ, . . . — Ո՛հ, դարձեալ
Մուշէ : — Ինչ ընենք, զիտենք որ այս
բառը Մեծնաւայի տաղալութիւն բերել
սկսաւ : Բայց ինչիւրը Մուշէ վրայ ըլլա-
լով, չենք կրնար Փէքլինի կամ Պոսթո-
նի վրայ տանիլ : Ուստի ի հարկէ բռ-
նապատեալ, պիտի ըսենք թէ, Մուշէ
մէջ անգղիականութեան աշակերտ-
ները Հայու կնիկն մը հողին իրենց հող-
ւոյն պէս Աստուծոյ հաճոյական նուէր մը
մատուցանել ուղիով, շփոթութեամբ
կընօն մարմինն ալ հետ վերցուցնեն եւ
կանը տունէն, եւ Երեւայի նման կենդա-

նւոյն փոխադրեն են . . . : Ուր փոխադ-
րենին ծանօթ է հասարակութեան : Այս
զործն առաջին հայեցումով ամենուս
ալ պարզապէս յափշտակութիւն մը թը-
ռեցաւ : վասն զի, եղածը կը թուի տեսն,
օրինաց, եւ մանաւանդ աւետարանին հա-
կառակ ձեռնարկութիւն մը կերեալ :
Բայց այս իգական Սահակոյ զօհին ա-
րարդապետները կատարողականներն ու
խարտալիւկներն աւետարան մը գտնեն,
որ կինն երկրէն եւ մարդն իր օխտը պը-
տէն զատելու սեպհականութիւն ունի ե-
ղեր : Մենք ասիկայ Փարիզ տնիգերական
մայրաքաղաքին մէջ, եւ աղայոյն բանա-
սէք Յօհան Ոսկերեանի ամօռանիստ
քաղաքին մէջ չգիտանալու ետեւ, հար-
կաւ Մշեցիք բանը մեզնէ աւել չգիտ-
նալով, անդիտարար դացեր, յափշտա-
կութիւնը զօրութեամբ բազմիկ ետ են
դարձուցեր :

Այս միամիտ մարդոց անգիտութեան
մեղքը մէկըն առնելէ ետեւ՝ ասկէ աւե-
լի ինչ արդար եւ օրինաւոր ձեռնար-
կութիւն կըլլայ : Մշեցիք զեւցաղացիք,
իրենց պատուոյն եւ իրաւանց տէրն ըլլալին
տարացուցեր, եւ զանգուածն ուսուցելու
ըլլ մասին, կամ թէ ըսենք, կովք կըլլու-
նկրող զօրաին հասկընդուցն են որ կօկոր-
ղը շատ պղտիկ եւ բերանը կը պատուի :

Իւ սակայն եղան փարդիկ ան տեսնը,
որ արդարութեան եւ իրաւանց այս հար-

դը Արարիկալտի զօրապետին յանձնեցին և զարգիւնք հետ միասնաբար յունին 2/14 ին տօնեցաւ Փարիզի մէջ կրօնական ու քաղաքական հանգէսներով, եւ Ա. Մարտիոն կայսրն ալ նոյն օրը մեծ զօրա հանգէս մը բուսաւ:

Մարտիոն կայսրը պատմական տուեք է, թէ միջնորդութիւնը երկու տէրութեանց մէջ միայն կրնայ ըլլալ. իսկ այս պարագայիս մէջ միջնորդութիւն խնդրելը՝ յեղափոխութիւնը ծանցնալ ըսել է:

Ընդդէմ կառավարութիւնն ալ խոստացնէ միայն խրատ տալ Սարաենիայի որ Մարտիոն ցամաք երկիրներուն մէջ խռովութիւն հանելու չաշխատի:

Իսկ Լատարիոյ կառավարութիւնը իւր ձեռքը եղած խտալական երկիրները խռովութիւնն պահպանելու միայն հոգ տանելով՝ այն կողմէն ունեցած զօրքերուն թիւն աւելցնելու որոշում բերէ:

Արաբի թէ Արարիկալտի զօրքերէն 2000 հոգի Մարտիոն ցամաք երկիրն Քալաթիէ քաղաքը իջեր են նաւերով, եւ բնակիչներն ոտք հաներ են:

Լաւրիկայէն քսանեւ հինգ հազար հրապէս իրկովիէ Լիզիէն Արարիկալտի զօրապետին տրվելու համար. Արարիկալտի ալ յանձնաժողով մը խորհրէ հոն՝ յիշեալ հրապէսներն բնութենելու:

Մարտիոն յունին 2/14 թուով եւ լաւ հեռադրական լուր մը կը ծանուցանէ թէ լատ. յունին 9 ին Քէնոպայէն երկու նաւ ծամբայ ելեր են 800 կամաւոր զօրք Սիւրիկա տանելու համար, եւ Սիւրիկայի մօտերը Մարտիոն պատերազմական նաւերուն հանգիստով դերի բռնելով են:

Գերմանական Օւ-Տայ-Բա-Քը լաւորին խօսքին նայելով՝ Մարտիոն աւելութեան ունեցած զօրութիւնն է՝ 143, 586 ցամաքային զօրք որոց 6000ը ձիաւոր, եւ 98 կտոր պատերազմական նաւ որոնք 832 թիւաւոր իր կրկն:

Սալայի եւ Միսայի երկիրներուն Պաղղոյ հետ միասնաբար յունին 2/14 ին տօնեցաւ Փարիզի մէջ կրօնական ու քաղաքական հանգէսներով, եւ Ա. Մարտիոն կայսրն ալ նոյն օրը մեծ զօրա հանգէս մը բուսաւ:

Հոլանտայի կառավարութիւնը իւր Տանիմար անտոյ դեսպան Պ. Տիւպօսին Ա. Պաղղոյ դեսպան անուանեց:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Օգոստոսիառ Ինքնակալը տէրութեան եկամուտն ու ծախքը քննելու եւ ըստ արժանւոյն բարեկարգելու համար յատուկ համարակալութեան ժողով (Բալահաթը մալիէ մէջիսի) մը հաստատելով, նախորդ Մեծ Եղարքոս բարձրադասիւ Մէհմետ Բիւշտի փաշանոյն ժողովին նախագահ անուանեց:

Երկուշաբթի օրը բարձր Մէհմետ Բիւշտի փաշան հանգիսի Բ. Դուռը երթալով, իր անուանման Խաթիթի Հիւմայունը կարգաւորեցաւ ի ներկայութեան բոլոր նախարարներուն:

Համարակալութեան ժողովը դանաւց պաշտօնատուներ պիտի դուստրի:

Բարձրադասիւ Մեծ Եղարքոս Գըպըրը Մէհմետ փաշան Ուսմանիէն Ալի փաշան, անկից ալ Միշ պիտի երթայ:

Բ. Դրան Պէյլիքի վսեմ Եֆէպէյն եւ Սիւրիկայի կառավարիչ Խամալի փաշան՝ բարձրադասիւ Մեծ Եղարքոսին հրամանաւր Ուսմանիէն Թուլա դաշեր են քանի մը կարեւոր զօրքերու քննութեան համար:

Թանգիմաթի ժողովին անդամ վսեմափայլ Ալի փաշան արտաքոյ կարգի տեսուչ անուանեցաւ Լաւրեստանի եւ Պաղղոսի դաւառներն երթալ աչքէ:

անցունելու համար:

Մայրաքաղաքիս յունաց Սիւրիկայի հետեւեալ յօդուածը կը հրատարակէ յունաց ազգին մէջ այս օրերս ծագած պատրիարքական ընտրութեան խնդրոյն վրայ:

«Պատրիարքական աթոռին պարագայ մնալուն պատճառաւ մեր ազգին զօրքերուն վանդած վեճակը՝ ներկայ քաղաքական ծանր դեպքանց միջոցին ալ Բ. Դրան հոգածութենէն չկրցաւ վերալի:

«Ընցեալ կիրակի վսեմափայլ Պուստ փաշան իմացուց թէ կը փախարի մեր ազգային ժողովին կողմանէ յատուկ պատգամաւորութեան մը հետ տեսութիւն ընելու: Ուստի կողերին կողմէն՝ Սիւրիկայ, Թաւադոնիկի, Երթայի եւ Լիզիկայի նուազօրոյ կալիփոստները, աշխարհականաց կողմէն ալ՝ որոթէթ Երթաւարքի պէյը, Եանի Բախարի պէյը, Լաւրեստի պէյը, երկու Գարաթոտորի տօթթօրները եւ Պ. Ա. Քրիքօձօ պատգամաւոր ընտրվելով՝ երկուշաբթի օրը արտաքին զօրքոց պաշտօնէին ծովեզրեայ ամարատուներ դաշին, ուր Սորին վսեմութիւնն իմացուց, թէ որչափ որ յունաց ազգային ժողովին շննած կանոնադրութեան վրայ շուտով որոշում չէր կրնար ընել ուրիշ կարեւոր զօրքերու պատճառաւ, այսուամենայնիւ կայսերական կառավարութիւնը զանկաւ ուշադրութեամբ նկատեր, ընդհանրապէս բարի եւ օգտակար գտնէր եկեղեցւոյն եւ ազգին համար:

«Միայն կերեւի որ ազգային ժողովը Պատրիարքի ընտրութեան վերաբերեալ յօդուածները շննած ժամանակը, բաւականապէս չէ ձգէր ընտրութեան մասին Բ. Դրան ունեցած իրաւունքները, որպէս զի ընտրված Պատրիարքը կայսերական կառավարութեան ալ վստահութեամբ արժանի անձ մը ըլլայ:

«Եյս պատճառաւ, ըսաւ Սորին վսեմութիւնը, ազգային ժողովը պէտք է

այս խնդրոյն վրայ խորհիւ Բ. Դրան իրաւունքները յայտնի ընելու միջոց մը գտնէ՝ առանց ամենեւին դաշելու եկեղեցւոյն եւ ազգին արածութեանցը: Ուստի լաւ կըլլայ որ դաւառներէն ընտրված պատրիարքացուներուն ցանկը կայսերական կառավարութեան ներկայացուի, որպէս զի անոնց մէջ իր վստահութիւնը չունեցող մէկ կամ երկու անձինք դրան նշանակուին անոնց անունը կարենայ աւելի, եւ յետոյ Ս. Սիւրիկայ երկրորդ ընտրութիւնն ընէ՝ իրեն ներկայացված վերջին երեք ընտրելիներուն մէջէն մէկը պատրիարք որոշելով: Այլապէս Սորին վսեմութիւնը առաջարկեց որ ազգային ժողովը շուտով այս խնդրը կարգի դնելու ջանքի, որպէս զի ետքն ալ Պատրիարքին ընտրութիւնը կատարվի:

«Եյս խօսքերէն ետեւ պատգամաւորութիւնը ետ դարձաւ: Արաբի թէ յառաջեկայ ուրբաթ օրը ազգային ժողովը պիտի գումարի վսեմ. Պուստ փաշային ըրած առաջարկութեանն զբաղելու:

«Իսկ մենք, կը կարծենք որ արտաքին զօրքոց պաշտօնէին այս առաջարկութիւնը պիտի օգնէ բարի համաձայնութիւն մը հաստատելու եկեղեցական ու քաղաքական իշխանութեանց մէջ, երբ որ Պատրիարքական աթոռը նստողն այն պիտի անձ մը ըլլայ, որ միանգամայն Բ. Դրան եւ ազգին վստահութիւնը վայելէ, եւ կը յուսանք որ ժողովը ու կալիփոստներն այս ցանկային արդիւնքը ձեռք բերելու կը ջանան եւ անդադրեն փութով:

Այստեղիս հրամանաւ:
Իէթիմօի (Արիւսի մէջ) կառավարիչ Խալիլը լաւ հաշիւ պաշան Արարիկալտի անուանեցաւ:

ՆԱԽՆ ԼՈՒՐԵՐ

Օգոստոսիառ Ինքնակալը առաջին կարգի Մէջիսիէ պատուանշան խրկեց

կաւոր յաղթանակին իրենց զօրանք եւ կորանք, եւ Մշեցուց ալ ասպատակութիւն՝ հուլիսահարութիւն՝ երուզակութիւն եւ աւաղակութիւն համարելով, գաղին ամենէն հեզ եւ խաղաղասեր մարդը հրապոյրեցին, որ Եփեսոսիէն մնացած շղթայներու ձայն մը հանէ: Եղթայիները շնչեցին յանկարծ, բայց աղիւններէնք որոտալ եւ փայլատակել սկսելով, Մէջմուսա, (ի պարձման իւր կրակով) զգաց անփորձութեամբ ըրածին: Ենաստենը՝ նոր աւետարանին ժառանգները գիրքը Մէջմուսայի հաղորդեցին, որ անոյ մարտնչի: Բայց Մէջմուսայի գրիչն ասանկ աւետարանական նիւթոց վրայ Հայերը խճճելու խաճկատելու վատ հոգին եւ վատթարացոյն եւ սրբապիղծ փաստաբանութեան սէր եւ վարժութիւն բնաւ ունեցած չըլլալուն, որովհետեւ ի շնորհս զինքը թախանձողներուն ինչ եւ իցէ բան մը պիտի ընէր, ուստի այլոց ասորքանօքն եւ ամենայն պարզմտութեամբ, Ղուկասու աւետարանին երկոտասաներորդ գլուխը Լաւրայի աստուածաբանութեամբ մէկնելով ճակատնիս նետեց: Եհաւասիկ իր մեկնարանութիւնը յառաջարանական խորհրդածութեամբը հանդերձ, որուն նշանաւոր մասնոցը հարկաւոր եւ հակիրճ պատասխաններն յօգելով, կընանք ճշմարտութեան պարտքն արամախօսուել:

Թիւն մը անուանել:
Ռ. - Երեւելեան եկեղեցիներն իրենց կրօնքն ուրիշներուն անջանցելու շատ փոյթ չեն ընել:

Ռ. - Ենոր համար, որ անգամ մը իշխանութեան ըստինքը, զրախտին ու զըրթօնց մէջ տեղը նոր կառուցուած պանդոկը չիճանցնալուն, կամ աւելի ճիշդ խօսելով, Պետրոսը կիսատուած եւ յաջորդը բոլորովին աստուած չիգաւանելուն համար հեթանոս չեն համարիր:

Ռ. - Եսիկայ գրութիւն մըն է:
Ռ. - Մամիկալ գիտէ որ ատիկայ գրութիւն մըն է. բայց մարդասիրական, թէ խռովարար, քրիստոնէական, թէ ամբարիշտ. ան ըսէ ինծի: Ինչ եւ իցէ,

Ռ. - Ենոր հակառակ, արեւմտեան եկեղեցին իր կրօնքն ամեն տեղ տարածելու կը ջանայ, կաշխատի, . . .

Ռ. - Հարկաւ անոր համար, որ 1800 տարեկն ի վեր հեթանոս շինաստանը Հնդկաստանը Ռաբոնը Պարսկաստանը Թաթարիստանը եւ Երասկիստանը ամբողջ ծարակիւն եւ բռնութեամբ ընկնէ ետեւ, 1500 տարեկն ի վեր քրիստոնէութեան մէջ մազերը ճնշվելու նող ազգ մըն ալ հոգեղէն աստուծոյ երկրպագութիւն չընելուն համար հեթանոս կը համարի:

Ռ. - Ստակ կը վատնէ, . . .
Ռ. - Ուրիշ կը գտնայ առ ըստակը, որովհետեւ ստակ ստանալու արդիւք ունի. եւ ինտոր կը վատնէ ատըստակը, որովհետեւ ստակի դաշելու հրաման չունի: Եկեղեցականի մը ստակ ըստանալն ամբարշտութիւն է նէ, ստիով քրիստոնէայ չենելն, ստիով քրիստոնէայ գնելն երկրաւոր արուեստներուն որ կարգը կը դասի: Այլապէս:

Ռ. - Եւ վերջապէս արիւն ալ կը թափէ:

Ռ. - Քարոզողաց թէ քարոզելոց: Եսիկայ Մէջմուսային չեն թողոր, որ անկեղծաբար յայտնէ, բայց Եստուած ու պատմութիւնն աղէկ գիտեն, եւ զըլխաւորաբար, Երեւանաւայ պատերազմին դաշտերը, Մէքսիքոյի բովանդակ մակերեւոյթը Պաղղոյ գրեթէ բոլորիս հանգները, եւ Սպանիայի, Վենետիկի ու Հոմայ սրբաբնութեան տաճարներուն պատերն ու ձեղունքը կը վիսկնէ: Ես ինչ է:

Ռ. - Եսիկայ ալ գրութիւն մըն է:

Ռ. - Եսիկայ տեսնաս. գիտենք որ աս ալ գրութիւն մըն է. բայց աճականները որն է, եւ հետեւանքն ինչ է:

Ռ. - Եսիկ կոխ՝ կադ. երկպառակութիւն եւ հակառակութիւն կը ծնի:

եղեր. քանի որ աւետարանին մէջ աս խօսքերը գրուած են, արեւմտեան եկեղեցին ասոր վայրէջքներն փոյթ չունի:

Ռ. - Եսիկայ ըսելու հարկ չեկայ. տաննջորս հարկը տարելէ ի վեր աշխարհ ամենայն տեսակով որ քրիստոնէութիւնն ու ընտանիքն անոր երեսէն անգործութիւն գտնալը չունին, տաննջլեցորդ դարն Երեւմուտքն անոր ձեռքին տակէն խալոսեց, եւ տաննջլեցորդ դարն ալ գործը կը պսակէ կոր. բան չունի նէ գնա պատերուն մարդարեւութիւն ընէ: Բայց առաջ ըսէ մեզի, տեսնանք աւետարանին որ խօսքն է, որ Հայոց տունները տակն ու վրայ ընելու չար խրատն ու անհոգութիւն կուսայ իր արդի եկեղեցւոյն:

Ռ. - Համարիք, եթէ խաղաղութիւն տալ եկի յերկիր. ոչ, ասիմ ձեզ, այլ, բոժինս:

Ռ. - Ենոր խօսք չեկայ, եւ ընենքն ալ չեն դիմանար: Խաղաղութեան միջեւ աշխարհի վերջը, որ խաղաղութիւնը կատարածին հետ դայ անմարտացեալ երկրաբնութիւն աւերապոյր վրայ թաղաւորէ: Հայկազունք. Քրիստոսի կամքն է եղեր աշխարհը խռովել, եւ արեւմտեան եկեղեցին ալ անոր խօսքին պատկերով, մեր տուններուն մէջ խռովութիւն ձգելու փոյթ չունի եղեր: Սեղով կարգելու ուրեմն իրենց խօսքով բա-

၇. ဂျာနယ် - ဦးစီးဌာန